ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԵՐ ՈՒԽՏԸ ՆՈՐՈԳԱԾ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ՝ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐԵԼՈՒ ԵՐԿՐԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 25 հունվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով ուխտագնացությունը Տերունական Սրբավայրեր, վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանության անդամներ:

Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, Վեհափառ Հայրապետի վերադարձը ողջունեց Մայր Տաճարի լուսարարապետ, Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

«Առաջին Մեր ուղևորությունը արտասահման, որ եղավ ուխտագնացություն Սուրբ Երկիր, Տերունակոխ Սուրբ վայրեր, բարեհաջող, խանդավառող ու գոտեպնդող ընթացք ունեցավ, և այսօր գոհունակ սրտով մեր աղոթքն ենք հղում առ Աստված՝ մեր Եկեղեցու շինության, մեր ժողովրդի բարօր կյանքի, մեր նվիրապետական Աթոռների պայծառացման և զորացման համար»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ այցելության մասին իր տպավորությունները կիսելով ներկաների հետ:

Ուխտագնացության ընթացքում Վեհափառ Հայրապետը եղավ Հորդանանում և Երուսաղեմում, այցելեց Տերունական բոլոր սրբավայրերը, Երուսաղեմում Հուլյան տոմարով հանդիսապետեց Սուրբ Ծննդյան արարողություններին, որին ներկա գտնվեց նաև ՀՀ նախագահը:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունեցավ նաև մի շարք պաշտոնական և էկումենիկ հանդիպումներ: Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանդիպելու և Հայրապետական պատգամն ունկնդրելու գանազան առիթներ ունեցան հայ համայնքն ու տարբեր երկրներից ժամանած հայ ուխտավորները:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ